

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2009 թվականի դեկտեմբերի 11-ի

ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԴՐԱՆՑ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ

*(Ռուսաստանի Դաշնության Կառավարության, Բելառուսի Հանրապետության
Կառավարության եւ Ղազախստանի Հանրապետության Կառավարության միջեւ կնքված
2010 թվականի հունիսի 18-ի Համաձայնագրով կատարված փոփոխություններով)*

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում՝ Մաքսային միության անդամ պետությունների Կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր),

ընդունելով միջազգային առևտրի համընդհանուր ճանաչում ունեցող նորմերն ու կանոնները,

առաջնորդվելով «Ապրանքների արտահանման եւ ներմուծման ժամանակ անուղղակի հարկերի գանձման սկզբունքների, աշխատանքների իրականացման, Մաքսային միությունում ծառայություններ մատուցելու մասին» Համաձայնագրի 4-րդ հոդվածով,

ելնելով ապրանքների արտահանման ու ներմուծման, Մաքսային միության անդամ պետությունների բյուջեներ անուղղակի հարկերի ժամանակին ու ամբողջական մուտքագրման նկատմամբ կիրառվող հսկողության խստացման փոխադարձ հետաքրքրվածությունից,

ցանկանալով այդ նպատակով ցուցաբերել փոխադարձ օժանդակություն,

համաձայնեցին հետեւյալի մասին՝

Հոդված 1

Անուղղակի հարկերի կիրառման կարգն ապրանքների արտահանման ժամանակ

1. Մաքսային միության մի անդամ պետության տարածքից Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք ապրանքների արտահանման դեպքում Մաքսային միության

այն անդամ պետության հարկ վճարողը (վճարողը) (այսուհետ՝ հարկ վճարողը), որի տարածքից դուրս են բերվել ապրանքները, կիրառում է ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) զրոյական դրույքաչափ եւ (կամ) ազատվում է ակցիզների վճարից՝ հարկային մարմին սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու դեպքում:

Մաքսային միության մի անդամ պետության տարածքից Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք ապրանքների արտահանման դեպքում, հարկ վճարողը իրավունք ունի հարկի պահում (գանձում) իրականացնելու Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգին նման ձեով, որը կիրառվում է սույն պետության տարածքից Մաքսային միության սահմաններից դուրս արտահանված ապրանքների առնչությամբ:

Ապրանքների իրացման վայրը սահմանվում է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության համաձայն:

2. ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ կիրառելու եւ (կամ) ակցիզների վճարից ազատվելու հիմնավորումն հաստատելու համար, Մաքսային միության այն անդամ պետության հարկ վճարողը, որի տարածքից արտահանվում են ապրանքները, հարկային հայտարարագրի հետ միաժամանակ հարկային մարմիններ է ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը (դրանց պատճենները).

1) պայմանագրերը՝ հաշվի առնելով դրանց փոփոխությունները, լրացումներն ու հավելումները (այսուհետ՝ պայմանագրեր, որոնց հիման վրա իրականացվում է ապրանքների արտահանում, ապրանքների լիզինգի կամ ապրանքային վարկի դեպքում (ապրանքային փոխառության, իրերի տեսքով փոխառություն)՝ լիզինգի պայմանագրեր, ապրանքային վարկի պայմանագրեր (ապրանքային փոխառության, իրերի տեսքով փոխառության), ապրանքների պատրաստման պայմանագրեր, պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման պայմանագրեր),

2) բանկային քաղվածք, որը հաստատում է արտահանված ապրանքների իրացումից ստացված հասույթի փաստացի մուտքը արտահանող հարկ վճարողի հաշվին, եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

Այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված է կանխիկ դրամական միջոցներով վճարում, եւ այդպիսի վճարումը չի հակասում Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքից արտահանվում են ապրանքները, ապա հարկ վճարողը

հարկային մարմին է ներկայացնում բանկային քաղվածքը (քաղվածքի պատճենը), որը հաստատում է հարկ վճարողի կողմից ստացված գումարները բանկային իր հաշվին ներմուծելը, ինչպես նաև դրամարկղային մուտքի օրդերների պատճենները, որոնք հաստատում են նշված ապրանքների գնորդի հասույթի փաստացի մուտքը, եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքից արտահանվում են ապրանքները:

Եթե ապրանքներն արտահանվում են լիզինգի պայմանագրի համաձայն, ըստ որի նախատեսվում է դրանց սեփականության իրավունքի փոխանցումը լիզինգը ստացողին, ապա հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հարկ վճարող-արտահանողի հաշվին լիզինգային վճարի (ապրանքների նախնական արժեքի փոխհատուցման մասով (լիզինգի ենթակա առարկաների)) փաստացի ելքը հաստատող բանկային քաղվածք (քաղվածքի պատճեն), եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

Արտաքին առևտրային ապրանքափոխանակման կարգով (բարտեր) գործարքներ իրականացնելու, ապրանքային վարկի տրամադրման (ապրանքային փոխառության, իրերի տեսքով փոխառության) դեպքում, հարկ վճարող արտահանողը հարկային մարմին է ներկայացնում այն ապրանքների ներկրումը (աշխատանքների իրականացում, ծառայությունների մատուցում) հաստատող փաստաթղթեր, որոնք նա ստացել է (ձեռք է բերել) նշված գործարքներով,

Ապրանքների ներկրման եւ անուղղակի հարկերի վճարման մասին դիմումի փոխանակումը մաքսային հայտարարագրի պատճենով, տես. 2010 թվականի հունիսի 18-ի N 293 Մաքսային միության հանձնաժողովի որոշումը:

3) ապրանքների ներկրման եւ անուղղակի հարկերի վճարման մասին դիմումը, որը կազմվել է՝ համաձայն «Մաքսային միության անդամ պետությունների հարկային մարմինների միջեւ էլեկտրոնային եղանակով անուղղակի հարկերի համար վճարված գումարների մասին, մաքսային միության այն անդամ պետության հարկային մարմնի նշումով, որի տարածք են ներկրվել ապրանքները, անուղղակի հարկերի վճարման (հարկային պարտավորություններից ազատման կամ դրանց իրականացման այլ կարգի) վերաբերյալ տեղեկությունների փոխանակման մասին» արձանագրության 1-ին հավելվածի ձեւի (այսուհետ՝ Դիմում) (բնօրինակը կամ պատճենը՝ ըստ Մաքսային միության անդամ պետությունների հարկային մարմինների հայեցողության),

4) Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված փոխադրման (բեռին կից ներկայացված) փաստաթղթերը, որոնք հաստատում են Մաքսային միության մի անդամ պետության տարածքից ապրանքների տեղափոխումը Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք: Նշված փաստաթղթերը չեն ներկայացվում, եթե ապրանքների տեղափոխման որոշ ձևերի համար այսպիսի փաստաթղթերի ձեւակերպումը նախատեսված չէ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ,

5) ԱԱՀ-ի գրոյական տոկոսադրույք կիրառելու եւ (կամ) ակցիզների վճարից ազատվելու հիմնավորումն հաստատող մյուս փաստաթղթերը, որոնք նախատեսված են Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքից արտահանվել են ապրանքները:

Դիմումից բացի՝ սույն կետով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվում հարկային մարմին, եթե ԱԱՀ-ի գրոյական տոկոսադրույք կիրառելու եւ (կամ) ակցիզների վճարից ազատվելու հիմնավորումը հաստատող փաստաթղթերը չներկայացնելը՝ հարկային հայտարարագրի հետ միաժամանակ, նախատեսվում է Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքից արտահանվել են ապրանքները:

Սույն կետով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվում ակցիզների համապատասխան հարկային հայտարարագրով, եթե դրանք ներկայացվել են ԱԱՀ-ի մասին հարկային հայտարարագրի հետ, եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

3. Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են հարկային մարմին՝ ապրանքները բեռնելու (փոխանցելու) ամսաթվից 180 օրացուցային օրերի ընթացքում:

Սահմանված ժամկետում սույն փաստաթղթերը չներկայացնելու դեպքում, անուղղակի հարկերի գումարները ենթակա են բյուջե վճարման, հարկային (հաշվետու) այն ժամանակահատվածով, որը համընկնում է ապրանքների բեռնման ամսաթվին, կամ էլ մեկ այլ հարկային (հաշվետու) ժամանակահատվածով, որը սահմանված է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ՝ ԱԱՀ-ի համապատասխան գումարների նվազեցման (հաշվանցման) իրավունքով՝ համաձայն Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրության, որի տարածքից արտահանվել են ապրանքները:

ապրանքների իրացման համար ԱԱՀ-ի հաշվարկման նպատակով բեռնման ամսաթիվը համարվում է կազմման ժամանակի առումով առաջին նախնական հաշվապահական (հաշվարկային) փաստաթղթի ամսաթիվը, որը ձեւակերպված է ապրանքների գնորդի (առաջին փոխադրողի) վրա, կամ էլ ուրիշ պարտադիր փաստաթղթի դուրսգրման ամսաթիվը, որը նախատեսված է ԱԱՀ վճարողի համար՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

Սեփական հումքից ստացված ենթակցիզային ապրանքների առումով՝ ակցիզների հաշվարկման նպատակով, ապրանքների բեռնման ամսաթիվ է համարվում կազմման ժամանակի առումով առաջին նախնական հաշվապահական (հաշվարկային) փաստաթղթի ամսաթիվը, որը ձեւակերպված է ապրանքների գնորդի (ստացողի) վրա, պատվիրատուի կողմից տրված հումքից ստացված ենթակցիզային ապրանքների առումով, բեռնման ամսաթիվ է համարվում «ենթակցիզային ապրանքների ընդունման եւ հանձնման մասին» ակտի ստորագրման ամսաթիվը, եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում արտադրվել են ենթակցիզային ապրանքները:

Հարկային մարմինն անուղղակի հարկերի չվճարման, ոչ ամբողջությամբ վճարման , սույն կետով սահմանված ժամկետի խախտմամբ այդպիսի հարկերի վճարման դեպքում, Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված անուղղակի հարկեր եւ տույժեր է բռնագանձում, որի տարածքից արտահանվել են ապրանքները, ինչպես նա եւ կիրառում է սույն պետության օրենսդրությամբ հաստատված անուղղակի հարկերի, տույժերի եւ պատասխանատվության միջոցների վճարման պարտականությունների իրականացումն ապահովելու եղանակներ:

Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերն հարկ վճարողի կողմից ներկայացնելու դեպքում, սույն կետով հաստատված ժամկետը լրանալուն պես, անուղղակի հարկերի վճարված գումարները ենթակա են նվազեցման (հաշվանցման), վերադարձման՝ համաձայն Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրության, որի տարածքից արտահանվել են ապրանքները: Անուղղակի հարկերի վճարման ժամկետները խախտելու համար հաշվեգրված եւ վճարված տույժերի, տուգանքների գումարները վերադարձման ենթակա չեն:

4. Մաքսային միության անդամ պետություններ արտահանվող ապրանքների ծավալը, ակցիզների դրույքաչափերը, որոնք ազդում են ենթակցիզային ապրանքների բեռնման

ամսաթվի վրա, ինչպես նաև ակցիզների գումարները ենթակա են նշման՝ ակցիզների մասով համապատասխան հարկային հայտարարագրում:

5. Հարկային մարմինը ստուգում է ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ կիրառելու եւ (կամ) ակցիզների վճարից, նշված հարկերով հարկային նվազեցումից (հաշվանցումից) ազատվելու հիմնավորումը, ինչպես նաև համապատասխան որոշում է ընդունում (կայացնում) այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքից արտահանվել են ապրանքները:

Հարկային մարմին Դիմումը չներկայացնելու դեպքում, հարկային մարմինն իրավունք ունի այն ապրանքների իրացմանն ուղղված գործարքների առնչությամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառման եւ (կամ) ակցիզների վճարից, նշված հարկերով հարկային նվազեցումից (հաշվանցումից) ազատվելու հիմնավորումն ապացուցող որոշում ընդունելու (կայացնելու), որոնք Մաքսային միության մի անդամ պետությունից արտահանվել են Մաքսային միության մյուս անդամ պետություն՝ Մաքսային միության մի անդամ պետության հարկային մարմնում Մաքսային միության մյուս անդամ պետության հարկային մարմնի կողմից տրված, լիարժեք ծավալով անուղակի հարկերի վճարման փաստի էլեկտրոնային տարբերակով հաստատման առկայության դեպքում:

6. Եթե ապրանքների տեղափոխման եւ անուղակի հարկերի վճարման մասին տեղեկությունները, որոնք ներկայացրել է հարկ վճարողը, չեն համապատասխանում Մաքսային միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև հաստատված տեղեկությունների փոխանակման շրջանակներում ստացված տվյալներին, ապա հարկային մարմինը Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով եւ չափի անուղակի հարկեր ու տույժեր է բռնագանձում, որի տարածքից արտահանվել են ապրանքները, ինչպես նաև կիրառում է անուղակի հարկերի, տույժերի վճարման պարտականությունների իրականացումն ապահովող եղանակներ, եւ սույն պետության օրենսդրությամբ հաստատված պատասխանատվության միջոցներ:

7. Սույն հոդվածի՝ ԱԱՀ-ի առնչությամբ դրույթները կիրառվում են նաև դրանց պատրաստման մասին պայմանագրերի մասով գործողությունների իրականացման արդյունք հանդիսացող այն ապրանքների նկատմամբ, որոնք դուրս են բերվում Մաքսային միության այն անդամ պետության տարածքից, որի տարածքում իրականացվել են դրանց պատրաստման աշխատանքները, Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք:

Նշված ապրանքներին չեն պատկանում պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման աշխատանքների իրականացման արդյունք հանդիսացող ապրանքները:

8. Պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման մասին պայմանագրի գործողությունների իրականացման արդյունք հանդիսացող ապրանքների ակցիզներով հարկման համար հարկային բազան սահմանվում է որպես ծավալ, ենթաակցիզային արտադրանքի քանակ (այլ ցուցանիշներ), որոնք պատրաստվել են պատվիրատուի կողմից տրված հումքից, բնաիրային արտահայտությամբ, որոնց նկատմամբ սահմանված են ակցիզների հաստատագրված (յուրահատուկ) դրույքաչափեր, կամ որպես պատվիրատուի կողմից տրված հումքից ստացված ենթաակցիզային արտադրանքի արժեք, որոնց նկատմամբ սահմանված են ակցիզների արժեքային (ադվալորային) դրույքաչափեր:

9. Մաքսային միության մի անդամ պետության տարածքից Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք ապրանքների (լիզինգի առարկաների) արտահանման դեպքում, լիզինգի պայմանագրի համաձայն, ըստ որի դրանց սեփականության իրավունքը փոխանցվում է լիզինգը ստացողին, համաձայն ապրանքային վարկի (ապրանքային փոխառության, իրերի տեսքով փոխառության) մասին պայմանագրի, համաձայն ապրանքների պատրաստման մասին պայմանագրի, կիրառվում է ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ եւ (կամ) ակցիզների վճարից ազատում՝ (եթե նման գործարքը, Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն, ենթակա է ակցիզային հարկով հարկման) սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերն հարկային մարմին ներկայացնելու դեպքում:

ԱԱՀ-ի հարկման բազան, Մաքսային միության մի անդամ պետության տարածքից Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք ապրանքներ (լիզինգի առարկաներ) արտահանելու դեպքում, լիզինգի պայմանագրի համաձայն որոշվում է յուրաքանչյուր լիզինգային վճարն ստանալու ամսաթվով՝ ապրանքների (լիզինգի առարկաների) նախնական արժեքի մի մասի չափով, որը նախատեսված է լիզինգի մասին պայմանագրով, բայց որը չի գերազանցում փաստացիորեն ստացված վճարի գումարը:

Հարկային նվազեցումները (հաշվանցումները) կատարվում են Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով, այն մասով, որը վերաբերում է ստացված լիզինգային վճարով ապրանքների (լիզինգի առարկաների) արժեքին:

Մաքսային միության մի անդամ պետության տարածքից Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք ապրանքներ արտահանելու դեպքում՝ համաձայն

ապրանքային վարկի (ապրանքային փոխառության, իրերի տեսքով փոխառության) մասին պայմանագրի ԱԱՀ-ի հարկման բազա է համարվում փոխանցվող (տրամադրվող) ապրանքների արժեքը, որը նախատեսված է պայմանագրով, պայմանագրում արժեքի բացակայության դեպքում՝ ապրանքին կից ներկայացված փաստաթղթերում նշված արժեքը, պայմանագրում եւ ապրանքին կից ներկայացված փաստաթղթերում արժեքի բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվարկում արտացոլված ապրանքների արժեքը:

10. Անուղղակի հարկերի վճարման ամբողջականությունն ապահովելու համար կարող է կիրառվել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությունը, որով կարգավորվում են հարկման նպատակով գինը որոշելու սկզբունքները:

2-րդ հոդվածի նորմերը չեն տարածվում Մաքսային միության այն ապրանքների նկատմամբ, որոնք դասվում (դասված) են մաքսային ազատ պահեստի եւ ազատ մաքսային գոտու մաքսային ընթացակարգերի ներքո (2010 թվականի հունիսի 18-ի Համաձայնագիր):

Հոդված 2

Անուղղակի հարկերի գանձման կարգն ապրանքների ներմուծման ժամանակ

1. Մաքսային միության մի անդամ պետության տարածքից Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք ներմուծվող ապրանքների առումով անուղղակի հարկերի գանձումը, եթե այլ բան նախատեսված չէ սույն Արձանագրությամբ, իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության հարկային մարմնի կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները՝ ըստ ապրանքների սեփականատեր հանդիսացող հարկ վճարողի հաշվառման վայրի, ներառյալ այն հարկ վճարողները, որոնք կիրառում են հարկադրման հատուկ ռեժիմներ՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները:

Սույն Արձանագրության նպատակներով՝ ապրանքների սեփականատեր է ճանաչվում այն անձը, որն օժտված է ապրանքների նկատմամբ իրավունքով, կամ որին ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը նախատեսվում է պայմանագրով:

1.1. Եթե ապրանքները ձեռք են բերվում Մաքսային միության մի անդամ պետության հարկ վճարողի եւ Մաքսային միության մյուս անդամ պետության հարկ վճարողի միջեւ կնքված պայմանագրի հիման վրա, ապա անուղղակի հարկերի մուծումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք

ներմուծվել են ապրանքները ապրանքների սեփականատիրոջ կողմից, կամ, եթե նախատեսված է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ, ապա կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի կողմից:

1.2 Եթե ապրանքները ձեռք են բերվում Մաքսային միության մի անդամ պետության հարկ վճարողի եւ Մաքսային միության մյուս անդամ պետության հարկ վճարողի միջեւ կնքված պայմանագրի հիման վրա, եւ ընդ որում ապրանքները ներմուծվում են երրորդ անդամ պետության տարածքից, ապա անուղղակի հարկերը վճարվում են Մաքսային միության այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք ներմուծվել են ապրանքները՝ ապրանքների սեփականատիրոջ կողմից:

1.3 Եթե ապրանքներն իրացվում են Մաքսային միության մի անդամ պետության հարկ վճարողի կողմից՝ Հանձնաժողովի պայմանագրի, հանձնարարականի կամ գործակալական պայմանագրի հիման վրա, Մաքսային միության մյուս անդամ պետության հարկ վճարողին եւ ներմուծվում են Մաքսային միության երրորդ անդամ պետության տարածքից, ապա անուղղակի հարկերի մուծումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք ներմուծվել են ապրանքները ապրանքների սեփականատիրոջ կողմից, կամ, եթե նախատեսված է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ, ապա՝ կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի կողմից:

14. Եթե Մաքսային միության մի անդամ պետության հարկ վճարողը ձեռք է բերում ապրանքներ, որոնք ավելի վաղ ներմուծվել են Մաքսային միության այդ անդամ պետության տարածք Մաքսային միության մյուս անդամ պետության հարկ վճարողի կողմից, որոնց մասով հարկերը չեն վճարվել, ապա անուղղակի հարկերի մուծումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները՝ ապրանքների սեփականատիրոջ կողմից, կամ, եթե նախատեսվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ, ապա՝ կոմիսիոների, հավատարմատարի, գործակալի կողմից (այն դեպքում, երբ ապրանքներն իրացվում են կոմիսիոների, հավատարմատարի, գործակալի միջոցով):

15. Եթե ապրանքները ձեռք են բերվում Մաքսային միության անդամ պետության հարկ վճարողի եւ Մաքսային միության անդամ չհանդիսացող պետության հարկ վճարողի միջեւ կնքված պայմանագրի հիման վրա, եւ, ընդ որում, ապրանքները ներմուծվում են Մաքսային միության մյուս անդամ պետության տարածքից, ապա անուղղակի հարկերը վճարվում են

Մաքսային միության այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք ներմուծվել են ապրանքները՝ ապրանքների սեփականատիրոջ կողմից, կամ, եթե նախատեսվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ՝ կոմիսիոների, հավատարմատարի, գործակալի կողմից (այն դեպքում, երբ ապրանքներն իրացվում են կոմիսիոների, հավատարմատարի, գործակալի միջոցով):

2. ԱԱՀ-ի վճարման նպատակներով, հարկման բազան որոշվում է ներմուծված ապրանքները հարկ վճարողի մոտ հաշվառման վերցնելու ամսաթվով (սակայն ոչ ուշ քան Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետը, որի տարածք ներմուծվում են ապրանքները), հիմք ընդունելով ձեռք բերված ապրանքների (այդ թվում դրանց պատրաստման մասին պայմանագրի առումով իրականացված աշխատանքների արդյունք հանդիսացող ապրանքների) արժեքը, ինչպես նաև այն ապրանքների, որոնք ստացվել են ապրանքային վարկի (ապրանքային փոխառության, իրերի տեսքով փոխառության) մասին պայմանագրով, այն ապրանքների արժեքը, որոնք պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման արդյունքում առաջացած արտադրանք են, եւ հիմք ընդունելով ենթասկզբիցային ապրանքների մասով վճարման ենթակա սկզբիցները:

Ձեռք բերված ապրանքների, այդ թվում դրանց պատրաստման մասին պայմանագրի գործողությունների իրականացման արդյունք հանդիսացող ապրանքների արժեք է գործարքի գինը, որը ենթակա է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) համար մատակարարին վճարելու համար՝ պայմանագրի պայմանների համաձայն:

Ըստ «Ապրանքափոխանակման (բարտեր) մասին» պայմանագրի, ինչպես նաև «Ապրանքային վարկի (ապրանքային փոխառության, իրերի ձեռով փոխառության) մասին» պայմանագրի, ստացված ապրանքների արժեք է համարվում ապրանքների այն արժեքը, որը նախատեսված է պայմանագրով. պայմանագրում արժեքի բացակայության դեպքում՝ ապրանքին կից ներկայացված փաստաթղթերում նշված արժեքը, պայմանագրում եւ ապրանքին կից ներկայացված փաստաթղթերում արժեքի բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվարկում արտացոլված ապրանքների արժեքը:

Մաքսային միության մի անդամ պետության տարածքից Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք վերամշակման արտադրատեսակների ներմուծման դեպքում, հարկման բազան որոշվում է որպես պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման աշխատանքների արժեք:

3. Մաքսային միության մի անդամ պետության տարածքից Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք ապրանքների (լիզինգի առարկաների) ներկրման դեպքում, հարկման բազան՝ ըստ լիզինգի պայմանագրի, որով նախատեսվում է դրանց սեփականության իրավունքի փոխանցումը լիզինգն ստացողին, որոշվում է ապրանքների (լիզինգի առարկաների) արժեքի մի մասի չափով, որը նախատեսված է դրա վճարման ամսաթվի համար լիզինգի պայմանագրով (անկախ դրա փաստացի չափից եւ մուծումը կատարելու ամսաթվից): Արտարժույթով արտահայտված լիզինգի վճարը վերահաշվարկվում է ազգային արժույթի՝ ըստ Մաքսային միության անդամ պետության կենտրոնական (ազգային) բանկի այն ամսաթվով սահմանած փոխարժեքի, որը համապատասխանում է հարկման բազան որոշելու պահին (ամսաթվին):

4. Ակցիզային հարկով հարկման համար հարկման բազա է ներկրված ենթակցիզային ապրանքների բնահրային արտահայտությամբ ծավալը, քանակը (այլ ցուցանիշներ), որոնց նկատմամբ սահմանված են ակցիզների հաստատագրված (յուրահատուկ) դրույքաչափեր, կամ ներկրված ենթակցիզային ապրանքների արժեքը, որոնց նկատմամբ սահմանված են ակցիզների արժեքային (ադվալորային) դրույքաչափեր:

Ակցիզային հարկի հաշվարկի համար հարկման բազան որոշվում է ներմուծված ենթակցիզային ապրանքները հարկ վճարողի կողմից հաշվառման վերցնելու ամսաթվով (սակայն ոչ ուշ քան Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետը, որի տարածք ներմուծվել են ենթակցիզային ապրանքները):

5. Անուղղակի հարկերի գումարները, որոնք ենթակա են վճարման՝ Մաքսային միության մի անդամ պետության տարածքից Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք ներմուծվող ապրանքների առումով, հաշվարկվում են հարկ վճարողի կողմից՝ ըստ հարկային դրույքաչափերի, որոնք սահմանված են Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածք ներմուծվել են ապրանքները:

6. Անուղղակի հարկերի վճարման ամբողջականությունն ապահովելու համար կարող է կիրառվել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությունը, որով կարգավորվում են հարկման նպատակով գինը որոշելու սկզբունքները:

7. Անուղղակի հարկերը՝ բացառությամբ մակնշվող ենթակցիզային ապրանքների ակցիզների, վճարվում են հետեյալ ամիսներին հաջորդող ամսվա 20-րդ օրվանից ոչ ուշ.

ներմուծված ապրանքները հաշվառման վերցնելու ամիս,

լիզինգի պայմանագրով նախատեսված վճարման ժամկետի ամիս:

Մակնշվող ենթակցիզային ապրանքների մասով ակցիզների վճարումը կատարվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

8. Հարկ վճարողը պարտավոր է Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ձեւաթղթով հարկային մարմին համապատասխան հարկային հայտարարագիր ներկայացնել, որի տարածք են ներմուծվել ապրանքները, այդ թվում համաձայն լիզինգի պայմանագրի՝ ոչ ուշ քան ներմուծված ապրանքներն հաշվառման վերցնելու ամսվան (լիզինգի պայմանագրով նախատեսված վճարման ժամկետին) հաջորդող ամսվա 20-ը : Հարկային հայտարարագրի հետ միաժամանակ, հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

1) Հայտը՝ թղթային կրիչի վրա (չորս օրինակով) եւ էլեկտրոնային եղանակով,

2) ներմուծված ապրանքների մասով անուղղակի հարկերի փաստացի վճարումը հաստատող բանկի քաղվածքը, կամ անուղղակի հարկերի մասով հարկային պարտավորությունների կատարումը հաստատող այլ փաստաթուղթ, եթե այդպես նախատեսված է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ: Հարկ վճարողի մոտ հաշվարկվածից ավելի վճարված (բռնագանձված) հարկերի գումարների, հավաքագրումների կամ անուղղակի հարկերի գումարների առկայության դեպքում, որոնք ենթակա են վերադարձման (հաշվանցման), ինչպես Մաքսային միության մի անդամ պետության տարածքից Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք ներմուծման դեպքում, այնպես էլ Մաքսային միության անդամ պետության տարածքում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման դեպքում, հարկային մարմինը՝ համաձայն Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրության, որի տարածք ներմուծվել են ապրանքները, որոշում է ընդունում (կայացնում) դրանց հաշվանցման վերաբերյալ՝ ներմուծված ապրանքների մասով անուղղակի հարկերի վճարման հաշվին: Այս դեպքում բանկի քաղվածքը (դրա պատճենը), որը հաստատում է ներմուծված ապրանքների մասով անուղղակի հարկերի փաստացի վճարումը, չի ներկայացվում: Սույն ենթակետում նշված փաստաթղթերը՝ համաձայն լիզինգի պայմանագրի, ներկայացվում են լիզինգի պայմանագրով նախատեսված վճարման ժամկետը մեկնարկելիս:

3) Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված փոխադրման (բեռին կից ներկայացված) փաստաթղթերը, որոնք հաստատում են

Մաքսային միության մի անդամ պետության տարածքից ապրանքների տեղափոխումը Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք: Նշված փաստաթղթերը չեն ներկայացվում, եթե ապրանքների տեղափոխման որոշ ձևերի համար այսպիսի փաստաթղթերի ձեակերպումը նախատեսված չէ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ,

4) ապրանքների բեռնման ժամանակ, Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն ձեակերպված հաշիվ-ապրանքագրերը, այն դեպքում, երբ դրանց ցուցադրումը (դուրսագրումը) նախատեսված է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ,

5) պայմանագրերը, որոնց հիման վրա ձեռք են բերվել Մաքսային միության մի անդամ պետության տարածքից Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք ներմուծված ապրանքները, ապրանքների (լիզինգի առարկաների) լիզինգի դեպքում՝ լիզինգի պայմանագրերը, ապրանքային վարկի (ապրանքային փոխառության, իրերի տեսքով փոխառության) դեպքում՝ ապրանքային պայմանագրերը (ապրանքային փոխառության, իրերի տեսքով փոխառության), ապրանքների պատրաստման մասին պայմանագրերը, պատվիրատուի կողմից տրված հումքի պայմանագրերը,

6) տեղեկատվական հաղորդագրությունը (սույն հոդվածի 1.2, 1.3, 1.4 եւ 1.5 կետերով նախատեսված դեպքերում), որը ներկայացվել է Մաքսային միության մի անդամ պետության հարկ վճարողին, Մաքսային միության մյուս անդամ պետության հարկ վճարողի կողմից, կամ Մաքսային միության անդամ չհանդիսացող պետության հարկ վճարողի կողմից (ղեկավարի կողմից (անհատ ձեռնարկատիրոջ կողմից) ստորագրված եւ կազմակերպության կնիքով հաստատված), որն իրացնում է Մաքսային միության երրորդ անդամ պետության տարածքից ներմուծված ապրանքները, Մաքսային միության երրորդ անդամ պետության հարկ վճարողի եւ Մաքսային միության այդ երրորդ անդամ պետության հարկ վճարողի հետ կնքված «Ներմուծված ապրանքների ձեռք բերման մասին» պայմանագրի հետեւյալ տեղեկությունների մասին.

համար, ըստ որի որոշվում է անձը՝ որպես Մաքսային միության անդամ պետության հարկ վճարող,

անդամ պետության հարկ վճարողի (կազմակերպության/ անհատ ձեռնարկատիրոջ) ամբողջական անվանումը,

Մաքսային միության անդամ պետության հարկ վճարողի գտնվելու (բնակության) վայրը,

պայմանագրի համարն ու ամսաթիվը,

մասնագրի համարն ու ամսաթիվը:

Եթե Մաքսային միության անդամ պետության հարկ վճարողը, որից ձեռք են բերվում ապրանքները, իրացվող ապրանքների սեփականատերը չէ (կոմիսիոներ է, հավատարմատար, գործակալ), ապա սույն ենթակետի 2-6-րդ պարբերություններում նշված տեղեկությունները, նույնպես ներկայացվում են իրացվող ապրանքների սեփականատիրոջ նկատմամբ:

Տեղեկատվական հաղորդագրությունն օտար լեզվով ներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ռուսերեն թարգմանության առկայությունը:

Տեղեկատվական հաղորդագրությունը չի ներկայացվում այն դեպքում, երբ սույն կետով նախատեսված տեղեկությունները ներառված են սույն կետի 5-րդ ենթակետում նշված պայմանագրում,

7) հանձնաժողովի պայմանագրերը, հանձնարարականներն ու գործակալական պայմանագիրը (դրանց կնքման դեպքում),

8) պայմանագրեր, որոնց հիման վրա ձեռք են բերվել Մաքսային միության մի անդամ պետության տարածքից, Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք ներմուծված ապրանքները՝ ըստ հանձնաժողովի պայմանագրերի, հանձնարարականի կամ գործակալական պայմանագրի (սույն հոդվածի 1.2 եւ 1.3 կետերով նախատեսված դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ անուղղակի հարկերը վճարվում են կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի կողմից):

Սույն կետի 2-8-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը կարող են ներկայացվել պատճեններով, որոնք հաստատվել են Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգին համաձայն:

Ըստ լիզինգի պայմանագրի՝ առաջին անգամ ԱԱՀ վճարելիս, հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում սույն կետի 1-8-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը: Հետագայում, հարկ վճարողը՝ հարկային հայտարարագրի հետ

միաժամանակ, հարկային մարմին է ներկայացնում սույն կետի 1-2-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը (դրանց պատճենները):

9. Ներմուծված ապրանքների մասով անուղղակի հարկերը չվճարելու, մասամբ վճարելու, այդպիսի հարկերը սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված ժամկետից ավելի ուշ վճարելու դեպքում, ինչպես նա եւ հարկային հայտարարագրերը չներկայացնելու, սույն հոդվածի 8-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ դրանք ներկայացնելու փաստեր հայտնաբերելու դեպքում, կամ հարկային հայտարարագրերում նշված տվյալների եւ Մաքսային միության անդամ պետությունների հարկային մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման շրջանակներում ստացված տվյալների միջեւ անհամապատասխանության դեպքերում, հարկային մարմինն անուղղակի հարկեր եւ տուժանքներ է գանձում Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգին եւ չափին համապատասխան, որի տարածք են ներմուծվել ապրանքները, ինչպես նա եւ կիրառում է պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ՝ ուղղված անուղղակի հարկերի, տուժանքների վճարմանը եւ սույն պետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ:

Ներմուծման ամսին հաշվառման վերցված ապրանքների անհամապատասխան որակի եւ(կամ) կոմպլեկտայնության առումով պայմանագրի մասնակիցների կողմից հաստատված պատճառով դրանք հետ վերադարձնելու դեպքում, հարկային հայտարարագրում այդ ապրանքների մասին նշում չի կատարվում: Ապրանքները հաշվառման վերցնելու ամիսը լրանալիս, այդպիսի ներմուծված ապրանքները հետ վերադարձնելու դեպքում, ներկայացվում են համապատասխան ճշգրտված (լրացուցիչ) հարկային հայտարարագրեր:

10. Կիրառելիս ապրանքներ, որոնց ներմուծումը Մաքսային միության անդամ պետության տարածք՝ համաձայն իր օրենսդրության, իրականացվել է առանց անուղղակի հարկերի վճարման, այլ նպատակներով, քան այն ապրանքները, որոնց առումով ընձեռվել է վճարից ազատում կամ վճարման այլ կարգ, ապա այդպիսի ապրանքների ներմուծումը ենթակա է սույն հոդվածով սահմանված կարգին համապատասխան անուղղակի հարկերով հարկման:

11. Անուղղակի հարկերի վճարված (հաշվանցված) գումարները, Մաքսային միության մի անդամ պետության տարածքից Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք ներմուծվող ապրանքների առումով, ենթակա են նվազեցման (հաշվանցման)՝ Մաքսային

միության այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածք ներմուծվել են ապրանքները:

12. Ակցիզային դրոշմանիշներով (հսկիչ նշաններով, դրոշմապիտակներով) մակնշման ենթակա ապրանքների առումով ակցիզների գանձումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետության մաքսային մարմինների կողմից, եթե այդպես նախատեսված է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

Հոդված 3

Փոփոխություններ եւ լրացումներ

Կողմերի փոխհամաձայնությամբ՝ սույն Արձանագրության մեջ կարող են փոփոխություններ կատարվել, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Կողմերի իրավասու մարմինները տարին մեկ անգամից ոչ պակաս անգամ վերանայում են սույն Արձանագրության մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու նպատակահարմարության հարցը:

Հոդված 4

Վեճերի կարգավորումը

Կողմերի միջեւ սույն Արձանագրության մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են շահագրգիռ Կողմերի խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով: Այդ խորհրդակցությունների կամ բանակցությունների մեկնարկի օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, շահագրգիռ Կողմերից որեւէ մեկի նախաձեռնությամբ՝ վեճը փոխանցվում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 5

Ուժի մեջ մտնելու կարգը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից դիվանագիտական ճանապարհներով Կողմերի կողմից ներպետական ընթացակարգերը կատարելու մասին

վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից, որոնք անհրաժեշտ են սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար:

Հոդված 6

Կիրառման ամսաթիվը

Սույն Արձանագրությունը ենթակա է կիրառման «Ապրանքների արտահանման եւ ներմուծման ժամանակ անուղղակի հարկերի գանձման սկզբունքների, աշխատանքների իրականացման, Մաքսային միությունում ծառայություններ մատուցելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի Համաձայնագրի գործողության մեջ մտնելու ամսաթվից:

Հոդված 7

Եզրափակիչ դրույթներ

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2009 թվականի դեկտեմբերի 11-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված պատճենը:

Բելառուսի
Հանրապետության
Կառավարության կողմից՝

(ստորագրություն)

Ղազախստանի
Հանրապետության
Կառավարության կողմից՝

(ստորագրություն)

Ռուսաստանի
Դաշնության
Կառավարության կողմից՝

(ստորագրություն)